Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 26 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (13.02.2009թ. մտից թիվ 4-53) վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի «Վստահված անձի կարգավիճակը» վերտառությամբ 27 հոդվածի սահմանադրականությունը:

Դիմումատուն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխան չի վճարել պետական տուրք՝ միջնորդելով ազատել իրեն այդ պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «է» կետի հիմքով, որը սույն դիմումի շրջանակներում կիրառելի չէ (տե՛ս 2-րդ դատական կազմի՝ 16.02.2009թ. 10.02.2009թ. մտից թիվ 4-44 դիմումի ընդունելիության կապակցությամբ որոշումը):

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն անհատական դիմում կարող է ներկայացվել սահմանադրական դատարան, եթե դիմումատուն հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ գտնում է, որ տվյալ գործով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ որեւէ պահանջ չի կատարվել դիմումատուի կողմից, մասնավորապես, դիմումատուն չի ներկայացրել <u>ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի</u>՝ գործը լուծող վերջնական ակտ, որով դիմումատուի նկատմամբ կիրառված լինի իր կողմից սույն դիմումով վիճարկվող ՀՀ ընտրական օրենսգրքի 27 հոդվածը, եւ օրենսդրությամբ սահմանված կարգով սպառած լինի այդպիսի գործով դատական պաշտպանության բոլոր միջոցները:

3. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Տ

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չքավարարելով պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան